ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«09» ապրիլի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - տնտեսագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Նորայր Աղամալյանը:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (05.04.2024թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 08.04.2024թ.՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նիստը նախագահողը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Տպագրական և առաքման ծառայություններ	13231160

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Յասոն ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
Պրինտ Բոքս ՍՊԸ	ք. Երևան, Ազատության 21, բն 31
ԱՆՆԱ ՄԱՆԴԵԼ ԱՐՈՆԻ ԱՁ	ք. Երևան, Վիլնյուսի 87 շ. 79 բն
Վեքթս ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավթի 70/1շ. բն1
Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	ք. Գորիս, Մ. Խորենացու 24
LA IMPORT LLC	ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/4

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-24/03» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Յասոն ՍՊԸ	11014800	20%	13217760	6649000	20%	7978800.00	
1	Պրինտ Բոքս ՍՊԸ	11025960	20%	13231152	6900000	20%	8280000.00	
1	ԱՆՆԱ ՄԱՆԴԵԼ ԱՐՈՆԻ ԱՁ	13225800	0%	13225800	13225800	0%	13225800.00	

1	Վեքթս ՍՊԸ	13231000	0%	13231000	13231000	0%	13231000.00	
1	Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	13400000	20%	16080000	13400000	20%	16080000.00	Մերժված
1	LA IMPORT LLC	550000000	20%	660000000	550000000	20%	660000000.00	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 08.04.2024թ.՝ ժամը 11:30-ին և Յասոն ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. ապրիլի 10-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ Նորայր Աղամալյան

Անդամներ՝

Տիգրան Զեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Արմինե Մարգարյան

Քարտուղար՝ Գայանե Դադիվանյան